նայրեց անցեալի յիշատակութիւնները, իւր հին հայերի կեանքի նմանողութեամբը: Թէև այնտեղ չկան հայեր այժմ, այնտեղ ապրում են թիւրքեր՝ բայց ապրում են հին եղանակով: Պատմական նախարարներ չ'կան, բայց կան խաներ, ցեղապետներ, որոնք նոյնպէս աւերում են, կրակի են տալիս մեծանց երկիրները, վնասում են ընդհանրութեան, իւրեանց անձնական թշնամութեան համար: Նոքա նոյնպէս տիրապետում են միաբեծան. ամբողջութեան, գոյութիւնն ու կեանքը անպայման կերպով ենթարկուած է անհատի հաճոյքին և կամայութեանը:

Մեր պատմութեան մէջ վատ ուսումնասիրուածը ժողովրդական կեանքի մասն է. մինչև անգամ կարելի է ասել, որ մեր պատմութիւնն ազնուա-

---

դանիներ քիչ են գտնում: Բնակիչները Տիրամօրցոց ձեռքից ազատելու համար մորթոտում են: Այն տեղ են հաւաքւում երկրի բորոտները և ուրուկները բժշկվելու մտօք, թերևս այդ սովորութիւնները պատմական ժամանակներից մնացած լինի: Այդտեղ են հաւաքւում մի տեսակ վերքերով ծածկված մարդիկ. այդ վէրքը անուանվում է «Տիրամօր եարայ» որով Տիրամայրը պատժում է այն ամենքին, որոնք իրան մատաղացու և նուէրներ չեն տալիս: Տիրամօր եարան ոչ այլ ինչ է, եթէ ոչ վեներական վէրքեր: Անդրկովկասի վանքերը ու նոցա ազդեցութիւնը իւրեանց շրջակայքում բնակվողների վերայ ծանօթ լինելով ունկնդիրներին, աւելորդ եմ համարում դոցա վերայ խօսել: